Լրամշակված նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-831-23.04.2024-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1998 թվականի մայիսի 5-ի Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը լրացնել 76.1-ին հոդվածով՝

«***Հոդված*** **76.1. Կորպորատիվ կառավարման կանոնագիրք**

1. Կորպորատիվ կառավարման կանոնագիրքը ներդրումների խթանման ոլորտում կառավարության քաղաքականությունը մշակող լիազոր մարմնի կողմից հաստատվող իրավական ակտ է, որը պարունակում է տնտեսական ընկերության կառավարման արդյունավետության բարձրացմանը, մասնակիցների իրավունքների պաշտպանությանը, գործունեության թափանցիկությանը եւ հաշվետվողականության բարձրացմանն ուղղված սկզբունքներ եւ ուղենիշներ:

2. Կորպորատիվ կառավարման կանոնագրքին միանալը տնտեսական ընկերությունների կողմից կամավոր է, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

3. Կորպորատիվ կառավարման կանոնագրքին միանալու վերաբերյալ որոշում ընդունելու իրավասությունը պատկանում է տնտեսական ընկերությունների մասնակիցների ընդհանուր ժողովին, եթե օրենքով կամ կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:»:

Հոդված 2. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ.

1. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

2. Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված ենթաօրենսդրական իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքի պաշտոնական հրապարակումից հետո՝ երեք ամսվա ընթացքում:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՆԱԽԱԳԻԾ

Կ-831-23.04.2024-ՊԻ-011/~~0~~1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1998 թվականի մայիսի 5-ի Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը ~~(այսուհետ՝ Օրենսգիրք)~~ լրացնել 76.1-ին~~.~~ հոդվածով՝

«***Հոդված 76.1***. Կորպորատիվ կառավարման կանոնագիրք

1. Կորպորատիվ կառավարման կանոնագիրքը ներդրումների խթանման ոլորտում կառավարության քաղաքականությունը մշակող լիազոր մարմնի կողմից հաստատվող իրավական ակտ է, որը պարունակում է տնտեսական ընկերության կառավարման արդյունավետության բարձրացմանը, մասնակիցների իրավունքների պաշտպանությանը, գործունեության թափանցիկությանը եւ հաշվետվողականության բարձրացմանն ուղղված սկզբունքներ եւ-ուղենիշներ~~կանոններ~~:

2. Կորպորատիվ կառավարման կանոնագրքին միանալը տնտեսական ընկերությունների կողմից կամավոր է, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

3. Կորպորատիվ կառավարման կանոնագրքին միանալու վերաբերյալ որոշում ընդունելու իրավասությունը պատկանում է տնտեսական ընկերությունների մասնակիցների ընդհանուր ժողովին, եթե օրենքով կամ կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:»:

Հոդված 2. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ.

1. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական ~~հրապարակումից երեք ամիս հետո~~հրապարակմանը հաջորդող օրը:

2. Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված ենթաօրենսդրական իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքի պաշտոնական հրապարակումից հետո՝ երեք ամսվա ընթացքում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-831-23.04.2024-ՊԻ-) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	***ՀՀ կառավարություն***	Նախագծի 1-ին հոդվածով լրացվող Օրենքի 76.1-ին հոդվածի 1-ին մաս	Նպատակ ունենալով ընդգծել Կանոնագրքի ոչ պարտադիր բնույթը, առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածով լրացվող Օրենքի 76.1-ին հոդվածի 1-ին մասում «կանոններ» բառը փոխարինել «ուղենիշներ» բառով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
2.	***ՀՀ կառավարություն***	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մաս	Պայմանավորված նախագծի ընդունման անհետաձգելիությամբ, առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասում պաշտոնական հրապարակումից երեք ամիս հետո» բառերը փոխարինել «պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը» բառերով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

3.	***ՀՀ կառավարություն***	Նախագծի 1-ին հոդված	Հաշվի առնելով, որ կրճատ տարբերակը նախագծում չի գործածվում առաջարկում ենք հանել «(այսուհետ՝ Օրենսգիրք)» ձևակերպումը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
4.	***ՀՀ կառավարություն***	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկում ենք 76.1 գրելաձևը փոխարինել 76.1-ին գրելաձևով՝ պահպանելով դասական թվանշանների գրելաձևը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
5.	***ՀՀ կառավարություն***	Նախագծի 1-ին հոդվածով նոր լրացվող 76.1 հոդված	Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի րդ մասի պահանջները հիմք ընդունելով առաջարկում ենք նոր լրացվող 76.1 հոդվածի վերնագրում «76.1» բառից առաջ լրացնել «հոդված» բառը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է: